ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հունիսի 2023 թվականի N 895 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1956-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում կապի ծառայությունների նորմաները և հեռախոսակապից օգտվելու օրինակելի ներքին կանոնները հաստատելու մասին» N 1956-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում հեռախոսակապի ծառայության գծով ծախսի ամսական սահմանաչափերի նորմաները և փոստային կապի ծառայությունների նորմաները սահմանելու մասին».

2) որոշման նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1.1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.».

3) որոշման 1-ին կետում «Հաստատել» բառը փոխարինել «Սահմանել» բառով.

4) որոշման 1-ին կետի «ա» պարբերությունում «հեռախոսակապի և փոստային կապի ծառայությունների նորմաները» բառերը փոխարինել «հեռախոսակապի ծառայության գծով ծախսի ամսական սահմանաչափերի նորմաները» բառերով.

5) որոշման 1-ին կետի «բ» պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

6) որոշումը 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. Փոստային կապի ծառայության ծախսի ծրագրավորման համար հիմք է հանդիսանում տվյալ մարմնի կողմից իրականացվող նամակագրական թղթակցության կամ այլ փոստային առաքումների ծավալը, ինչպես նաև նշված ծառայությունների գծով կատարված փաստացի ծախսի մակարդակը։».

7) որոշումը 5-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին, 5.2-րդ, 5.3-րդ և 5.4-րդ կետերով.

«5.1. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության, ազգային անվտանգության ծառայության, արտաքին հետախուզության ծառայության, պետական պահպանության ծառայության, ինչպես նաև հարկադիր կատարումն ապահովող ծառայության, քրեակատարողական ծառայության մարմինների ղեկավարներին՝ եռամսյա ժամկետում ներքին իրավական ակտերով կանոնակարգել տվյալ մարմնի կողմից օգտագործվող հեռախոսակապի ծառայության գծով ծախսի նորմաները՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի ծրագրավորումն ապահովելու նպատակով։

5.2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հանրապետության նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի, Սահմանադրական դատարանի, գլխավոր դատախազության, քննչական կոմիտեի, հակակոռուպցիոն կոմիտեի, մարդու իրավունքների պաշտպանի, հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, կենտրոնական ընտրական հանձնաժողովի, հաշվեքննիչ պալատի, ինքնավար մարմինների գլխավոր քարտուղարներին (աշխատակազմերի ղեկավարներին), դատական դեպարտամենտի ղեկավարին Հայաս-

տանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի ծրագրավորման նպատակով՝ եռամյա ժամկետում ներքին իրավական ակտերով կանոնակարգել տվյալ մարմնի կողմից օգտագործվող հեռախոսակապի ծառայության գծով ծախսի նորմաները և փոստային կապի ծառայությունների նորմաները՝ հաշվի առնելով նշված ծառայությունների անհրաժեշտ ծավալը և դրանց գծով կատարված փաստացի ծախսի մակարդակը:

5.3. Սույն որոշմանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերը ծրագրավորելու նպատակով պետական մարմիններում՝

1) առկա յուրաքանչյուր հեռախոսագծի համար տեղական ելից զանգեր իրականացնելու նպատակով նախատեսել ամսական 1000-ական դրամ (ցանցի ներսում և դեպի այլ օպերատորներ).

2) օգտագործվող հեռախոսագծերի քանակը հաշվարկել՝

ա. սույն որոշման N 1 հավելվածով սահմանված հաստիքների համար մեկական հեռախոսագիծ,

բ. սույն որոշման N 1 հավելվածով սահմանված ստորաբաժանումների համար մեկական հեռախոսագիծ՝ յուրաքանչյուր 4 աշխատողի հաշվով,

գ. տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի համար՝ մեկական հեռախոսագիծ:

5.4. Սույն որոշման N 1 հավելվածով սահմանված աղյուսակի «Ընդամենը» սյունակում նշված ամսական գումարների շրջանակներում, ըստ անհրաժեշտության, համապատասխան պաշտոնատար անձանց հատկացնել առանձին բջջային կապի հնարավորություն (փաթեթի կամ հեռախոսահամարի տեսքով):».

8) որոշման 1-ին կետի «ա» պարբերությամբ հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

05.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ